ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒՇ ԲՐՈՆԶԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԴԱՇՈՒՅՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Օ. Ս. ԽՆԿԻԿՅԱՆ

Հայկական լեռնաշխարհը, հանդիսանալով մետաղագործության նախամշակման օջախներից մեկը, չափազանց հարուստ է տարբեր վայրերում հայտնաբերված և տարբեր դարաշրջաններին պատկանող մետաղյա իրերի հավաքածուներով։ Բացառիկ հետաքրքրություն են ներկայացնում այդ տեսակետից ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանին (XIII—X դդ. մ. թ. ա.) վերաբերվող հուշարձանները, որոնք արտացոլում են մետաղագործության տարբեր բնագավառներում տեղի ունեցող տեխնիկական առաջընթացը։ Մետաղագործության զարգացման այս բուռն վերելքն առանձնակի պարզությամբ դիտվում է նշված ժամանակաշրջանի զինագործության և մասնավորապես զանազան տեսակի բրոնզե դաշույնների ուսումնասիրության ընթացքում։

Ներկա հոդվածով մենք ձգտում ենք ուշ բրոնզի դարաշրջանի դաշույններին վերաբերող նախկին ուսումնասիրությունների արդյունքների և նորահայտ նյութերի հիման վրա ամփոփել և պարզություն մտցնել դաշույնների տեղական, ներմուծված կամ ընդհանուր արևելյան տեսակների բնորոշման մեջ։ Առաջին հայացքից քիչ նշանակություն ունեցող այս հարցերը կարևոր են ոչ միայն զինագործության և մետաղաձուլության զարգացման մակարդակը որոշելու, այլև հարևան երկրների հետ Հայաստանի արհեստագործության կապերը, ազդեցություններն ու փոխազդեցությունները բացահայտելու տեսակետից։

Ընդհանուր կովկասյան և Հայաստանի ուշ բրոնզեդարյան դաշույնների տարբեր խմբերի դասակարգմանն ու բնորոշմանը ժամանակին իրենց աշխատություններում մեծ տեղ են հատկացրել Ա. Ա. Իեսսենը[1], Բ. Բ. Պիոտրովսկին[2], Բ. Ա. Կուֆտինը, Ե. Ի. Կրուպնովը[3], Հ. Ա. Մարտիրոսյանը[4], Ս. Ա. Եսայանը[5] և մի քանի այլ հնագետներ։

Կովկասի հնագիտության մեջ առաջինը Ա. Ա. Իեսսենն էր, որ 30-ական թթ. դասակարգեց հայտնի բրոնզեդարյան դաշույնատեսակները աշխարհագրական սահմանների մեջ և մատնանշեց դաշույնների այն տեսակը, որը ծագել էր Հին Արևելքում և այնուհետև լայն տարածում գտել Հայաստանում և Կովկասում։ Ա. Ա. Իեսսենի դասակարգումը ավելի ևս զարգացրին Բ. Ա. Կուֆտինը, Բ. Բ. Պիոտրովսկին, Ե. Ի. Կրուպնովը։ Հայաստանի ուշ բրոնզեդարի և վաղ երկաթի ժամանակաշրջանի մշակույթի բնութագրմանը նվիրված իր հետաքրքիր մենագրության մեջ Հ. Ա. Մարտիրոսյանը մանրակրկիտ ուսումնասիրության է ենթարկել նաև նախնադարյան Հայաստանի պղնձե և բրոնզե դաշույնների գլխավոր տիպերի ժամանակագրությունը, որը և հիմք ենք ընդունել ներկա հոդվածի համար։ Ս. Ա. Եսայանը ուսումնասիրելով նախնադարյան Հայաստանի զենքերը և ռազմական գործը, գտնում է, որ ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանում հանդես են եկել դաշույնների 6 տեսակ։

Հենվելով նորագույն տվյալների, ինչպես նաև պատրաստման եղանակների վրա, ուսումնասիրվող դարաշրջանի դաշույնները մենք դասակարգում ենք հետևյալ 8 տեսակների և մի շարք ենթատեսակների մեջ։

Ուշ բրոնզեդարյան դաշույնների առաջին՝ հնագույն տեսակը հայտնի է դեռևս III հազարամյակից, սակայն շարունակում է իր գոյությունը նաև ուշ բրոնզի դարաշրջանում։

---

[1] А. А. Иессен, К вопросу о древней металлургии меди на Кавказе, Изв. ГАИМК, вып. 120, М—Л., 1935.

[2] Б. Б. Пиотровский, Археология Закавказья, Л., 1949.

[3] Е. И. Крупнов, Материалы по археологии Северной Осетии докобанского периода, МИА, № 23, М—Л., 1951.

[4] А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964.

[5] С. А. Есаян, Оружие и военное дело древней Армении, Ереван, 1966, էջ 58—76։

1960—61 թթ. ընթացքում պեղումներ կատարելով Արթիկի դամբարանադաշտում, Տ. Ս. Խաչատրյանը[6] № 3 և № 109 դամբարաններից ու բրոնզի I փուլին (մ. թ. ա. XIII—XII դդ.) պատկանող բնորոշ իրերի հետ հայտնաբերեց նաև բավական սրիտաիկ տեսք ունեցող դաշույնների երկու բրոնզե շեղբեր։ Դրանցից մեկը հարթ, փոքրիկ, տերևաձև, առանց կենտրոնական ուռուցիկության շեղբիկ էր, որն ուներ փոքրիկ լեզվակ՝ փայտե կամ ոսկրե կոթը ամրացնելու համար (աղ. 1, № 3)։ Մյուսը իր պատրաստման տեխնիկայով նույնն էր, միայն շեղբը ավելի ձգված ձև ուներ և ծայրը ավելի կլորացված էր (աղ. 1, № 4)։ Արթիկի պեղումներից շուրջ 40 տարի առաջ նույնատիպ շեղբեր հայտնաբերել էր Ժ. դե Մորգանը Ջոնիում (մոտավորապես 40—45 կմ Լենքորանից հարավ-արևմուտք) կատարած պեղումների ընթացքում[7]։ Ժ. դե Մորգանը չի բերում հնագիտական կոմպլեքսները, նույնիսկ ընդհանուր նկարագիրը և քիչ թե շատ ստույգ ժամանակագրությունը, սակայն հենելով նրա նկարագրած իրերի բնույթից, զարդանախշից, դժվար չէ նկատել, որ այդ շեղբերը պատկանում են ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջաններին։ Դրանցից մեկը (աղ. 1, № 2) հար և նման է Արթիկից հայտնաբերված շեղբին, իսկ մյուսը տարբերվում է նրանից միայն պոչուկի կենտրոնական մասում ունեցած անցքով (աղ. 1, № 1)։ Դաշույնների I տեսակին պատկանող նմանօրինակ բրոնզե շեղբեր, մ. թ. ա. XIII դարի իրերի կոմպլեքսի մեջ, հայտնաբերել է դեռևս 1896 թ. Պ. Վ. Զարկովսկին. Թազաքենդի դամբարանադաշտի պեղումների ընթացքում։ Դրանցից մեկը հայտնի է № 3 դամբարանաթմբից։ Դա լայն, համարյա ուղղանկյուն շեղբ է, կենտրոնական մասի ուռուցիկությամբ և կտրվածքի թեթև ռոմբաձև տեսքով (աղ. 1, № 5)։ Այս մանրամասները տարբերում են Թազաքենդի շեղբը վերը նկարագրված օրինակներից և հնարավորություն են տալիս այն դիտելու որպես առաջին տեսակի II ենթատեսակ։ Թազաքենդի դամբարանադաշտի մյուս շեղբը առաջինից տարբերվում է միայն իր ավելի ձգված և նեղ համամասնություններով (աղ. 1, № 6)։ Այս ենթախմբի մեջ կարելի է դասել նաև Թազաքենդի № 7 դամբարանաթմբից հայտնաբերված դաշույնի շեղբը (աղ. 1, № 7), ինչպես և Մեծամոր գյուղի (Վերին Զեյվա) № 1 քարարկղի պեղման ընթացքում հայտնաբերված դաշույնաշեղբը, որը ուղեկցող նյութերի միջոցով թվագրվում է մ. թ. ա. XIII—XII դդ.։ Դաշույնի մեծամորյան շեղբը (աղ. 1, № 8), ինչպես և վերը հիշված Թազաքենդի № 3 դամբարանաթմբից հայտնաբերվածը, լայն է և համարյա ուղղանկյուն, կտրվածքում ունի թեթևակի ռոմբաձև տեսք և օժտված է փոքրիկ լեզվակով, որն իր վրա կրում էր հետագա մշակման հետքեր։ Բացի այս շեղբերից, ուսումնասիրվող շրջանին են պատկանում նաև շեղբեր, որոնք ընդհանուր առմամբ պատկանելով այս խմբի դաշույններին, այնուամենայնիվ տարբերվում են իրենց փոքր ինչ ավելի կատարելագործված ձևերով, ուստի և նպատակահարմար ենք գտնում դրանք դասել I տեսակի III ենթախմբի մեջ։ Այս ենթախմբին է պատկանում Մեծամորի № 2 քարարկղից հայտնաբերված դաշույնի շեղբը, որը տերևաձև է, ռոմբաձև հատվածքով, իսկ լեզվակը, ինչպես և շեղբի հիմքը, ունի 5 անցք կոթի ամրացման համար (աղ. 1, № 9)։ Ճիշտ նույն տիպի շեղբ, դժբախտաբար առանց ուղեկցող նյութի, հայտնի է նաև Բջնուց. ուսերը թեք են, իսկ շեղբի երկու կողմերը ենթարկված են լրացուցիչ մշակման (աղ. 1, № 10)։ Նման շեղբեր գտնվել են նաև Զանգեզուրից (աղ. 1, № 11), Գոլովինոյից[8] (աղ. 1, № 12), Կամոյից (աղ. 1, № 13), Արմավիրից, Լենինականից և Կիրովականից[9]։ Պետք է ասել, որ ուսումնասիրված շեղբերը (I և II ենթատեսակ), բացի Արթիկի № 3 դամբարանադաշտի շեղբից և անհայտ ծագում ունեցողներից, պկղվել են համայնքի շարքային անդամներին պատկանող դամբարանաթմբերից և ունեն իրենց բնորոշ զուգահեռները վաղ[10] և միջին[11] բրոնզի դարաշրջաններին պատկանող հուշարձաններում։ Տարակույս չկա, որ այդ ենթատեսակի շեղբերը չի կարելի համարել ուշ բրոնզի դարաշրջանի I փուլի դաշույնների զարգացման հիմնական ցուցանիշ։ Ավելի շուտ դրանք պետք է դիտել որպես տեղական, հնից պահպանված գինագործական ավանդույթների շարունակություն, մի բան, որը ցույց է տալիս

---

[6] Т. С. Хачатрян. Материальная культура древнего Артика. Ереван, 1963, էջ 49, աղ. II, նկ. 1, 2։

[7] J. de Morgan, La prehistoire Orientale, tome III. Paris, 1927, էջ 205 նկ. 200, 1, 2։

[8] А. А. Мартиросян, Раскопки в Головино. Ереван, 1954, էջ 74—75։

[9] ՀՍՍՀ ՊՊԹ, գույք 1236/85։

[10] Է. Վ. Խանզադյան, Մետաղագործության առաջին փաստերը Հայկական լեռնաշխարհում հնագույն բրոնզի դարաշրջանում, «Պատմա-բանասիրական հանդես», 1963, № 3, էջ 300։

[11] Նկատի ունենք միջին բրոնզի 3-րդ փուլին պատկանող Կիրովականից հայտնաբերված դաշույնը։ Գտնվում է ՀՍՍՀ ՊՊԹ, գույք 1864/15 (աղ. 1, № 14)։


№1
№2
№3
№4
№5
№6
№7
№8
№9
№10
№11
№12
№13
№14
№15
№16
№17
№18
№19
0 3 6
0 1 2
0 2 4
0 2 4
0 2 4
0 2 4
0 2 4
0 1.5 3
0 2 4
0 4 8
0 2 4
0 1.5 3
0 2.5 5

Աղյուսակ I

ուշ բրոնզի մետաղագործության կապը նախորդ դարաշրջանների հետ։ Այս I դաշույնատեսակը, որ պեղվել է Համայնքի շարքային անդամներին պատկանող դամբարաններից, հաջորդ շրջանում դադարում է հանդես գալ, դուրս գալով գործածությունից, կամ ավելի ճիշտ անընդհատ զարգանալով հավաորվում է իրբև դաշույնների VII տեսակ։

Այս տիպի դաշույններ հայտնի են նաև Վրացական ՍՍՀ Թրիալեթիի[12], Սամթավրոյի, Քվասաթալիի[13] և այլ դամբարանադաշտերից, Օսեթիայի՝ Ֆասկաուի և Դոնիֆարսի[14] դամբարանադաշտերից, Դաղստանի Տարկի աուլից (Մախաչկալայի մոտ)[15], Կրասնոդարի մարզից և Չեչենոինգուշեթիայից, Բորգուստանսկ կայարանի մոտից (Ռոստովից 28 կմ արևմուտք)[16], Մայկոպի II խմբի նյութերից և այլ վայրերից։ Հարց է առաջանում, թե ի՞նչ չափով են առնչվում թվարկված դաշույնները Հայաստանի մետաղագործության հետ։ Այս հարցի պատասխանը մենք գտնում ենք Ս. Ն. Զերնիխի աշխատության մեջ, որը հենվելով մետաղե իրերի, այդ թվում և դաշույնների անալիզների արդյունքների վրա, եզրակացնում է, որ Մայկոպի II խմբի մետաղե իրերի բաղադրությունը համապատասխանում է Ղափանի պղնձահանքի բաղադրությանը։ Նման հանգամանքը կարող է մատնացույց անել, որ հյուսիսկովկասյան մետաղե իրերը, պատրաստի վիճակում կամ ձուլակների ձևով, ներմուծվել են Անդրկովկասից։ Սակայն չպետք է անտեսել այն հանգամանքը, որ այս I դաշույնատեսակը վերապրուկային է, այսինքն ավելի հատկանշական է մ. թ. ա. III—II հազարամյակներին, ուստի և վերը արված եզրակացությունը ավելի շուտ վերաբերում է վաղ և միջին բրոնզի ժամանակաշրջանին։ Իսկ ուշ բրոնզի ժամանակաշրջանում անդրկովկասյան մետաղագործական օջախի դերը հյուսիսային Կովկասի համար հավանաբար սկսում է նվազել, որը երևում է ինչպես մետաղագործական անալիզից, այնպես էլ հաջորդ դաշույնատեսակների ուսումնասիրությունից։

Դաշույնների II տեսակը, որը հայտնաբերվել է դեռևս փոքր քանակությամբ, այսպես կոչվող «բաղադրյալ դաստակով» դաշույններն են։ Սրանց հետաքրքրական օրինակներից մեկը նույնպես հայտնաբերվել է Թազաքենդում, Ջարկովսկու կողմից № 6 դամբարանաթմբի պեղման ժամանակ։ Այն բաղկացած է առանձին-առանձին ձուլված դաստակից և շեղբից, ընդ որում շեղբը չատ է նման վերը նկարագրված № 3 և № 7 դամբարանաթմբերից հայտնաբերված շեղբերին։ Շեղբը վերջանում է լեզվակով, որի վրա ամրացված է քառակող, կիսաբևեռաձև գլխիկով, հիմքի մասում լայնացող բրոնզե դաստակը։ Դաստակի ողջ մակերևույթը ծածկված է եռանկյունաձև զարդանախշերով (աղ. 1, № 15)։ Դաստակի նման կառուցվածք և զարդանախշ ունի Լճաշենի № 1 դամբարանի «հարթ հայելու» բռնակը[18], որի հետ «հայտնաբերված եռաժանին համապատասխանում է Մերնեպտայի (մ. թ. ա. XIII դ.) անուն կրող իրերի հետ գտնված Ուգարիտի եռաժանիներին[19]։ Թազաքենդի այս դաշույնը իր նմանակներն ունի Կումբուլթայից և Դոնիֆարսից[20] պատահականորեն հայտնաբերված դաշույնների մեջ։ Սրանք մասամբ նման են Թազաքենդի, մասամբ էլ Լճաշենի դաշույններին, որոնց մենք կանդրադառնանք դաշույնների IV տեսակի մասին խոսելիս։ Թազաքենդի դաշույնի դաստակը և հատկապես նրա գլխիկն ու զարդանախշը նորից հանդես են գալիս երկաթի դարաշրջանին պատկանող «Ռուսական» և «Պարսկական» Մալիշներից հայտնաբերված շրջանակավոր դաստակով դաշույնների, ինչպես նաև փոքր ինչ վերափոխված տեսքով դաշույնների IV տեսակի մեջ։ Բացի դրանցից պեղումների միջոցով հայտնա-

---

[12] Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, т. I, Тбилиси, 1941, աղ. LII, էջ 339։

[13] О. М. Джапаридзе, Квасатальский могильник эпохи бронзы в Юго-Осетии. КСИИМК, вып. 60, 1955, նկ. 2, 1—5, 10—12։

[14] Е. И. Крупнов, Мат. по арх. Сев. Осетии..., МИА, № 23, նկ. 9, 3 և 6։

[15] К. Ф. Смирнов, Археологические исследования в районе селения Тарки, МИА, № 23, 1951, էջ 254, նկ. 14, 4։

[16] А. А. Иессен, Прикубанский очаг металлургии и металлообработки в конце медно-бронзового века, МАК, № 23, 1951, էջ 92, նկ. 21, 8։

[17] Е. Н. Черных, История древнейшей металлургии Восточной Европы, М., 1966, էջ 46 և էջ 72։

[18] А. О. Мнацаканян, Раскопки курганов на побережье оз. Севан в 1956 г., С. А., 1957, № 2, էջ 148—152, նկ. 12 և 14։

[19] А. А. Мартиросян, Армения в эпоху..., էջ 86։

[20] П. С. Уварова, Могильники Северного Кавказа, МАК, VIII, М., 1900, աղ. XCVII, 5 և աղ. LXXXIII, նկ. 3։

բերվել են դաշույններ, որոնք մեր կարծիքով նույնպես պատկանում են II տեսակին։ Սրանք բարձր վարպետությամբ պատրաստված զենքեր են, որոնց դաստակները և շեղբերը ձուլված են առանձին-առանձին, այսինքն պատրաստված են նույն եղանակով, ինչ և վերը նկարագրվածները։ Նախորդների նման սրանք էլ իրենց սնամեջ դաստակին ունեն եռանկյունաձև անցքերով զարդանախշեր։ Սակայն այս դաշույները նախորդներից տարբերվում են իրենց նեղ ու երկար շեղբերով, ինչպես նաև նրանով, որ դաստակը շեղբին է միանում իր կիսալուսնաձև հիմքով։ Այս հատկանիշներով սրանք հակվում են դեպի III տեսակը, ուստի ավելի նպատակահարմար ենք գտնում այս տեսակի դաշույները դասել II տեսակի II տարբերակի մեջ, որից հայտնաբերվել է Լճաշենի № 1 դամբարանաթմբից (աղ. 2, № 22)։ Լճաշենի այս դաշույնից (մ. թ. ա. XIII դ.) ոչնչով չի տարբերվում Ցոռսի գյուղից հայտնաբերվածը[21]։

Այս երևույթը մի կողմից մատնանշում է Թազաքենդի տիպի դաշույնի զարգացման տարբեր փուլերը և նրա ազդեցությունը մյուս դաշույնատեսակների կազմավորման վրա, մյուս կողմից էլ ակնհայտորեն ցույց է տալիս այս տեսակի լայն տարածումը։

Դաշույնների III տեսակը մասնագիտական գրականության մեջ հայտնի է «շրջանակավոր դաստակ» ունեցող դաշույն անունով և դասվում է Առաջավոր Ասիական զենքատեսակների շարքին։ Իրանք, ինչպես ցույց են տալիս 1896 թ. Կարմիր վանքի մոտի դամբարանադաշտից հայտնաբերված դաշույնը (աղ. 1, № 16) և նրա հետ գտնված հնագիտական այլ նյութերը[22], Հայկական լեռնաշխարհում երևան են եկել դեռևս միջին բրոնզի դարաշրջանի I փուլի վերջում և II փուլի սկզբում, շարունակելով իրենց գոյությունը պահպանել մինչև մ. թ. ա. IX—VIII դդ.։ Այս դաշույները հայտնի են Հայաստանի այլ վայրերից ևս՝ Կամոյից, Ադիամանից (Ներքին-Գետաշեն), Գոլովինոյից. մի քանի օրինակներ կան նաև Էջմիածնի (աղ. 1, № 18, 19) և Կիրովականի թանգարաններում։ Այդպիսիք հայտնաբերվել են նաև «Ռուսական» Թալիշից, Մուղանից, Թվարկված դաշույններից իրենց ձևով փոքր-ինչ տարբերվում են 1929 թ. Ղրիանոցից հայտնաբերված դաշույնը (աղ. 1, № 17), ինչպես և Ղափանից ու Մեղրուց հայտնաբերվածները[23], որոնք ի տարբերություն նախորդների, ունեն զանգակաձև գլխիկ, որը բացակայում էր նախորդ օրինակներից։ Այս նոր գծի շնորհիվ նրանք ներկայացնում են ասես մի անցումնային ենթատեսակ դաշույնների III և V տեսակների միջև։ Այսպիսի դաշույններ են հայտնաբերվել «Բոզվի (արևմտ. Վրաստան), Գալիաթ (հյուս. Օսեթիա), Մագիրո (Կախեթիա), Մաջալիս գյուղերից (Դաղստան), Աղա-Եվլաից (Պարսկական Թալիշի)»[24]։ Դրանց ավելացվում է 3 հատ այս տիպի դաշույն օսեթինո-դիդորության անձնագրով և 2 դաշույն Կվասաթալի և Գարի բնակավայրերից (Վրաստան)[25]։ Ներկայումս այս ցուցակին ավելացվում է Աստրախան-Բազար գյուղից հայտնաբերված դաշույնը (Ադրբ. ՍՍՀ)[26]։ Այս տիպի դաշույները ոմանք ժամանակագրում է եգիպտական 18-րդ դինաստիայով և հյուքսոսների ներխուժմամբ Եգիպտոս (մ. թ. ա. XVIII—XIV դդ.)։ Մոնտելիուսը Կալախից (Ասորեստան) հայտնաբերված նման դաշույնը թվագրում է մ. թ. ա. XIV—XII դդ., Դյուսսոն՝ Ուգարիտից հայտնաբերվածները թվագրում է մ. թ. ա. XII դ.։ Մինչև մ. թ. ա. 800-ական թթ. է ժամանակագրում Ս. Պրժևորսկին, իսկ Կրուպնովը՝ մ. թ. ա. II հազարամյակի վերջին դարերով[27]։ Իեսսենը և Ս. Եսայանը այդ տիպի դաշույները վերագրում են մ. թ. ա. 1500—800 թթ., իսկ Հ. Մարտիրոսյանը՝ մ. թ. ա. XVIII—XVII դդ. սկսած մինչև VIII դ.[28]։ Շատ հավանական է, որ այս դաշույնատեսակը սկզբնական շրջանում (մ. թ. ա. XVIII—XVI դդ.) ներմուծվելով, հետագայում տարածվում և զարգանում է տեղական մետաղագործության հիմքի վրա։ Հետևելով այս դաշույնատեսակի տարածման ուղղություններին, դժվար է նկատել, որ Հայաստանը կատարել է յուրատեսակ շարժափոկի դեր՝ հարավի ավելի զարգացած մշակույթը հյուսիս փոխանցելու գործում։ Մյուս կողմից էլ տրված թվագրությունները մատնացույց են անում Հայաստանի սերտ, անմիջական շփումը Առաջավոր Արևելքի և հյուսիսի հետ։

---

21 Б. А. Куфтин, Археологическая маршрутная экспедиция 1945 г. в Юго-Осетию и Имеретию, Тбилиси, 1949, աղ. IX։

22 А. А. Спицын, Некоторые закавказские могильники, ИАК, вып. 29, էջ 11, նկ. 31.

23 С. А. Есаян, նշվ. աշխ., էջ 73, աղ. XII, նկ. 7։

24 А. А. Иессен, К вопросу....., էջ 162—163, նկ. 27, քարտեզ VI։

25 Б. А. Куфтин, Арх. марш. эксп....., էջ 223, աղ. IX, նկ. 3, աղ. XXIV—7։

26 Գտնվում է Բաքվում, Ադրբ. ՍՍՀ, ՊՊԹ։

27 Е. И. Крупнов, նշվ. աշխ., էջ 68։

28 А. А. Мартиросян, Армения в эпоху....., էջ 50 և 108, նկ. 20, 16։

Եթե ճիշտ են մեր դիտողությունները, ապա հաստատվում է այն եզրակացությունը, որ Հայաստանի մետաղագործությունը, ընդհուպ մինչև միջին բրոնզի դարաշրջանի վերջը, ունեցել է բավական մեծ նշանակություն հյուսիսի համար, որ հետագայում սկսում է նվազել։ Այս հիման վրա մենք մերժում ենք Վ. Միլլերի և նրա հետևորդների (Ի. Տոլստոյ, Ն. Կոնդակով) այն անհիմն պնդումը, թե իբր «Կովկասը հանդիսացել է խուլ անկյուն, որտեղ կուլտուրական նորամուծությունները շատ ուշ էին հասնում կովկասյան ձորերի վայրենիներին»[29]։

Դաշույնների IV տեսակը, որը հանդես է գալիս մոտավորապես մ. թ. ա. XIV—XIII դդ. սկսած, հարատևում է մինչև IX—VIII դդ. մ. թ. ա.։

Այս խմբին պատկանողները, որոնցից հայտնաբերվել են նաև 1956 թ. Լճաշենի ցեղային գերեզմանոցներին պատկանող հարուստ դամբարանաթմբերի պեղումների ընթացքում, բրոնզե սիաձույլ դաշույններ են, որոնք ունեն կիսաբևեռաձև գլխիկներով վերջացող գլանաձև դաստակներ։ Դրանց շեղերը լայն են, եռանկյունաձև, կենտրոնում ունեն վերից վար անցնող խոր ակոսիկներ (աղ. 2, № 1)։ Բոլոր դաշույններն էլ գտնվել են հմտորեն պատրաստված բրոնզե պատյանների մեջ, որոնք ամբողջովին զարդանախշված են եռանկյունաձև, ուղղանկյուն անցքերով, իսկ մեկ օրինակի վրա դրան ավելացված է սողացող օձի ուռուցիկ զարդանախշը (աղ. 2, № 2)։ Նման դաշույն հայտնաբերվեց 1952 թ. Այրիվանքից, որի գլանաձև դաստակը Լճաշենի օրինակների պես, վերին և ստորին մասերում ունի եռանկյունաձև անցքեր (աղ. 2, № 3)։ Այս տեսակի դաշույններ հայտնաբերվեցին նաև Նորագուղում ու Արթիկում կատարված պեղումների ընթացքում, որոնք սակայն վերը նկարագրվածներից տարբերվում են նրանով, որ սրանց գանգակաձև գլխիկը ձուլված է առանձին (աղ. 2, № 4, 5, 6)։ Արթիկի այս դաշույնները թվագրվում են մ. թ. ա. XIII—XII դդ., իսկ Նորագուղինը՝ մ. թ. ա. X—IX դդ.։

Դաշույնների V տեսակին են պատկանում Արթիկից (աղ. 2, № 7, 8), Դիլիջանից (աղ. 2, № 9) հայտնաբերվածները։ Դրանք IV դաշույնատեսակից տարբերվում են իրենց դաստակներով, որոնց եզրերը ծալված են ծեծելու միջոցով, որ չի նկատվում նախորդ օրինակների վրա։ Բացի այս դաշույններից հայտնի են նաև օրինակներ, որոնք ընդհանուր առմամբ պատկանելով նկարագրվող խմբին, այնուամենայնիվ նախորդներից տարբերվում են իրենց դաստակի վերին մասով, որն ունի ոչ թե գանգակաձև գլխիկ, այլ կիսալուսնի տեսք։ Այս հատկանիշի շնորհիվ մենք ավելի նպատակահարմար ենք գտնում դրանք դասել V տեսակի II ենթատեսակի մեջ։ Այս ենթատեսակին է պատկանում Կիրովականի Դիմաց թաղամասից հայտնաբերված դաշույնը (աղ. 2, № 10)։ Այն ունի լայն եռանկյունի շեղբ, որի կենտրոնով ձգվող 4 ակոսիկները սայրի մոտ միանում են իրար. պատյանը թե՛ ձևով և թե՛ պատրաստման տեխնիկայով հիշեցնում է Լճաշենից հայտնաբերված դաշույնների պատյանները։ Նման պատյաններ հայտնաբերվել են նաև Կամոյից։ Դրանք որոշ չափով հիշեցնում են Ուրի թագավորական գերեզմանից հայտնաբերված ոսկուց պատրաստված դաշույնի պատյանը[30]։ Սակայն, մեր կարծիքով, սրանից չպետք է հետևցնել, թե մեր դաշույնները ազգակցական կապ ունեն Միջագետքի դաշույնների հետ։ Դրան խոչընդոտում է առաջին հերթին այն հսկայական ժամանակահատվածը, որն ընկած է այս դաշույնատեսակների միջև։ Մյուս կողմից էլ նման են որոշ չափով միայն պատյանները։ Վերջապես բացառված չէ նաև, որ IV դաշույնատեսակը կարող է առաջացած լինել II-ի հետագա զարգացումից, որի հետ ունի մի շարք ընդհանուր գծեր (մետաղյա սնամեջ դաստակ, կիսաբևեռաձև գլխիկ, եռանկյունաձև անցքերով զարդանախշեր, պատրաստման նման եղանակ)։

Բացի վերը նշված օրինակներից V տեսակի II ենթախմբի դաշույններ հայտնաբերվել են նաև Մորգանի՝ Այավերդում կատարած պեղումներից (աղ. 2, № 11), Ուզունլար գյուղից[31]։ Այս դաշույնները, շնորհիվ նույնատիպ սրերի, թվագրվում են մ. թ. ա. XII—XI դդ.։ IV և V խմբին պատկանող դաշույններ հայտնաբերվել են նաև Գնտաբեկից, Բակուրցիխեից, Կախեթիայից[32], ինչպես նաև Ադրբեջանի ու Վրաստանի այլ վայրերից, ուր դրանք թվագրվում են մ. թ. ա. XIII—VIII դդ.։

Ելնելով շարադրվածից տեսնում ենք, որ 1) դաշույնների IV—V տեսակները ընդգրկում են ողջ Անդրկովկասը. 2) Հայաստանում առկա են այս դաշույնատեսակների զարգացման բոլոր ձև-

---

29 В. Миллер, Терская область, МАК, I, М., 1888, էջ 112։

30 Н. Д. Флиттнер, Культура и искусство Двуречья и соседних стран, Л.—М., 1958, էջ 116։

31 ОАК за 1894 г., էջ 46, նկ. 70։

32 К. Н. Пицхелаури, Кинжалы кахетинского типа, «Материалы по археологии Грузии и Кавказа», т. II, Тбилиси, 1959, աղ. I, էջ 138։



Աղյուսակ 2

վերը. 3) IV դաշույնատեսակը Հայաստանում թվագրվում է XIV—XIII դդ. սկսած, իսկ Կախեթիայում՝ XIII—XII դդ. սկսած։ Այստեղից էլ կարելի է եզրակացնել, որ դա տեղական մետաղագործության արտադրանքն է և լայն տարածում է գտել հարևան երկրներում։ Ուստի և մենք ավելի նպատակահարմար ենք գտնում այս դաշույնատեսակը անվանել ոչ թե կախեթական, այլ հայաստանյան։

Դաշույնների VI տեսակը, որն ընդհանուր գծերով բաժանվում է 2 ենթախմբի, հանդիպում է արդեն բրոնզի II շրջանից սկսած (մ. թ. ա. XII—XI դդ.)։ Սրա I ենթախմբին պատկանող լավագույն օրինակներից մեկն է 1950 թ. Գոլովինոյի № 2 դամբարանից պեղված դաշույնը (աղ. 2, № 12)[33], որն օժտված է ձգված, եռանկյունաձև շեղբով, կենտրոնական մասում ունի ուռուցիկ տեսք։ Այս գծերով այն կապվում է դաշույնների IV—V տեսակների հետ, իսկ դաստակը, որի եզրերը երկու կողմերից ծալված են, ավելի շուտ հիշեցնում է III տեսակին պատկանող «շրջանակավոր դաստակով» և V-ի II ենթախմբին պատկանող դաշույնների պատրաստման տեխնիկան։ Չնայած այս դաշույնատեսակը իր մեջ ամփոփում է նախորդների էական գծերը, այնուամենայնիվ նրանցից տարբերվում է իր կատարելագործված ձևերով, մի հանգամանք, որը մատնացույց է անում այն փաստը, որ տեղական մետաղագործները ծանոթ են եղել III դաշույնատեսակի պատրաստման տեխնիկային։ Նման դաշույններ հայտնաբերվել են Դիլիջանից (աղ. 2, № 13, 14), Ալավերդուց (աղ. 2, № 15), Բջնուց (աղ. 2, № 16), Լալայանի՝ Նոր-Բայազետում (Կամո), Ներքին Ադիաման (Ներքին Գետաշեն) գյուղերի մոտ կատարած պեղումներից[34], ինչպես և Ա. Ա. Իվանովսկու պեղած՝ Գետարեկի և Քալաքենդի միջև գտնվող №№ 6, 23, 26, 66 դամբարանթմբերից[35]։ VI տեսակի II ենթախմբին պատկանող դաշույնը, որից ներկայումս մեզ հայտնի է միայն 1966 թ. Շամշադինից պեղված միակ օրինակը, I ենթատեսակից տարբերվում է միայն իր առանձին ձուլված զանգակաձև գլխիկով (աղ. 2, № 17)։ Նման դաշույններ հայտնի են նաև Ադրբեջանական ու Վրացական ՍՍՀ այնպիսի վայրերից, ինչպես՝ Խանլարը, Առաջաձորը, Աստրախան-Բազարը, Զովդարը, Մինգեչաուրը[36], Բակուրցիխեն, Սամթավրոն և այլն։ Ինչպես տեսնում ենք, VI տեսակին պատկանող դաշույնները, սերտորեն կապվելով նախորդ դաշույնատեսակների հետ և հանդես գալով Անդրկովկասի բազմաթիվ վայրերից, չեն հանդիպում նրանից հարավ գտնվող տերիտորիաներում և, այդպիսով, հանդիսանում են տեղական գինագործության արգասիքներ։

Դաշույնների հաջորդ՝ VII տեսակը, որը Բ. Ա. Կուֆտինի բնորոշմամբ հնագիտական գրականության մեջ ընդունված է անվանել սեանյան[37], հանդես գալով մոտավորապես VI-ի հետ միաժամանակ, ավելի լայն տարածում է ստանում ուշ բրոնզի դարաշրջանի III փուլում (մ. թ. ա. VI—X դդ.)։ Այս դաշույնատեսակը ընդհանուր առմամբ նորություն լինելով, այնուամենայնիվ իր մի շարք մանրամասներով սերտորեն կապված է հատկապես I տեսակի III ենթախմբի և IV, V, VI դաշույնատեսակների հետ։ Սովորաբար այս դաշույնները ունեն ոչ մեծ, եռանկյունաձև շեղբեր, որոնք վերջանում են նեղ, փոքրիկ լեզվակով, որը վերջնամասում ունի անցք։ Այս հատկանիշներով այն մոտենում է I տեսակի III ենթախմբի դաշույններին, սակայն շեղբի վրա ունեցած եռանկյունաձև ուռուցիկությամբ, ակոսներով ու այլ գծերով հիշեցնում է V-ը։ Այս դաշույնատեսակի պարտադիր մասն են կազմում զանգակաձև գլխիկները, որոնք իրենց զուգահեռներն ունեն IV, V, VI տեսակների մեջ։ Նման տիպի դաշույնների առատությամբ հատկապես աչքի են ընկնում Լճաշենի, Կամոյի, Ներքին Գետաշենի դամբարանթմբերը, որտեղից հայտնաբերվել են այժմ ՀՍՍՀ ՊՊԹ-ում գտնվող 20/89—98 և 20/108—109 համարները կրող դաշույնները։ Սրանք, բացի վերը հիշատակված մանրամասներից, կոթի ամրացման համար ունեն նաև գոտեկապ (աղ. 2, № 18), որը և սրանց միակ նորությունն է։ Դրանցից, նույնպես մեծ քանակությամբ, հայտնաբերվել են Գետարեկ-Քալաքենդի շրջանում, որը ենթադրել է տալիս, թե նրանց պատրաստման կենտրոններից մեկն էլ գտնվում էր Շամխորի պղնձահանքերի մոտակայքում։ Նման դաշույններ հայտնաբերվել են նաև Զոլաքարից (ՀՍՍՀ ՊՊԹ, դույլ № 1998 (15, 13, 28), որոնցից մեկի ուսերը, ի տարբերություն մյուսների, բարձրացված են և դրանով

---

[33] А. О. Мнацаканян, О раскопках могильников у села Головино Арм. ССР, КСИИМК, вып. XLVI, 1952, էջ 69, նկ. 161։

[34] Օ. Լալայան, Դամբարանների պեղումները Խորհրդային Հայաստանում, Երևան, 1931, էջ 109։

[35] А. А Ивановский, По Закавказью, М., 1911, МАК, т. VI, աղ. 1, նկ. 1—3, աղ. 111—12։

[36] Գտնվում է Ադրբեջանական ՍՍՀ պետական պատմական թանգարանում։

[37] Б. А. Куфтин, Арх. раскопки в Триалети, т. I, §7.

հակվում է I տեսակին պատկանող Մեծամորից հայտնաբերված դաշույնին (աղ. 2, № 19)։ Այս տեսակին պատկանող օրինակներ հայտնաբերվել են նաև Վարդաքարից[38], Թաքիալից (աղ. 2, № 20), Զանգեզուրից (ՀՍՍՀ ՊՊԹ, դույլ № 1926/10), Անիից (ՀՍՍՀ ՊՊԹ, դույլ № 123/1593), Պիրովականից, Բարձրանից, Տոլորսից[39], Դանձակից[40], Մուգանից, Մինգեչաուրից[41], Բրիալեթիից, Սամթավրոյից և այլ վայրերից։ Այս դաշույնատեսակը իր գոյությունը պահպանելով մինչև IX—VIII դդ., հետագայում փոխարինվում է նույն տեսակի երկաթե դաշույններով՝ օժտված բրոնզե գոտեկապով և զանգակաձև ղլխիկով, որոնցից կարելի է մատնանշել Լենինականից, Կամոյից ու Ստեփանավանից հայտնաբերված օրինակները։

Դաշույնների VIII տեսակը, որն առայժմ հայտնի է շնչին քանակությամբ, իրենից ներկայացնում է «մետաղի մի ամբողջական կտորից պատրաստված դաշույն, որի դաստակի վերին մասը ավարտվում է նորալուսնի ձև կրող զարդով։ Շեղբն իր կենտրոնական մասում օժտված է վերից վար անցնող ուռուցիկ երիզով»[42]։ Այսպես է նկարագրում Մորգանը Զոնիից. բրոնզի դարաշրջանի III փուլին պատկանող մի գամբարանաթմբից հայտնաբերված դաշույնը (աղ. 2, № 21)։ Այդպիսի պատահականորեն հայտնաբերվել են նաև Նոյեմբերյանից և Զարխեչից (Կուրիշն), ընդ որում Նոյեմբերյանից հայտնաբերված է միայն դաստակը իր նորալուսնաձև զարդով, իսկ Զարխեչինը ունի սնամեջ, գլանաձև դաստակ, եռանկյունաձև և սվաստիկաձև զարդանախշերով[43]։ Հենվելով այս սակավաթիվ օրինակների վրա, կարելի է ենթադրել, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանում Հայաստանի, «Ռուսական» և «Պարսկական» Թալիշների միջև գոյություն են ունեցել որոշակի մշակութային կապեր։ Այս դաշույնատեսակի առաջացման ու զարգացման հանգամանքները դեռևս լիովին պարզված չեն, սակայն բացառված չէ, որ այն կարող է հանդիսանալ II և III դաշույնատեսակների զարգացման արգասիք։ Ուշագրավ է հատկապես այն երևույթը, որ Թալիշից հայտնաբերված որոշ «շրջանակավոր դաստակով դաշույններ» ունեն նույն նորալուսնաձև զարդը, որը սակայն հանդես է գալիս ոչ թե դաստակի վերին մասում, այլ շեղբի հիմքում։ Բացի այդ իրար նման են նաև շեղբերը։ Վերջապես Զարխեչից հայտնաբերված դաշույնի դաստակի պատրաստման տեխնիկան ոչնչով չի տարբերվում II դաշույնատեսակի պատրաստման տեխնիկայից։ Շարադրվածը մեզ հանգեցնում է այն եզրակացության, որ VIII դաշույնատեսակին պատկանող որոշ օրինակներ հանդիսացել են II-ի զարգացման արգասիք, մինչդեռ մյուս մասը (Զարխեչ)՝ առաջ է եկել II-ի և III-ի միաձուլումից։

Նկատելով դաշույնների առատությունը, նրանց միաձման տեսքից, պետք է ենթադրել, որ դրանց պատրաստման եղանակները բավական հեշտ են եղել։ Սակայն ցույց տալ պատրաստման որևէ եղանակ, որպես հարցի վերջնական պատասխան, տվյալ դեպքում վեր է մեր հնարավորություններից։ Կատարված փորձերի հիման վրա, սակայն, մենք կարող ենք առաջադրել շատ թե քիչ հավանական ենթադրություններ[44]։

Հավանական է ենթադրել, որ I տեսակի դաշույնները սկզբից ձուլվել են, ապա ենթարկվել ջարդ կոման, մի տեխնիկա, որն ավելի հատկանշական է մետաղագործության նախնական շրջանին։ Դա կարող էր ունենալ հետևյալ պատճառները։

ա) Պղինձը, թանձրահեղուկ լինելով, հեշտությամբ չի լցնում փակ կաղապարի անցքերը, և դժվարությամբ է ազատվում կաղապարից։

բ) Պղինձը հալման ժամանակ հեշտությամբ է կլանում գազը, որի հետևանքով փակ կաղապարի մեջ լինելու դեպքում իրի մակերեսին պղպջակներ են առաջանում։ Սրանք կարող էին անպետք դարձնել տվյալ իրը հետագա օգտագործման համար։ Մնում է ենթադրել, որ I տեսակի դաշույն պատրաստելու համար օգտվել են բաց կաղապարից։ Շիկացած բրոնզն իրը կաղապա-

---

38 Т. С. Хачатрян. Комплекс бронзовых предметов из селения Вардакаб. ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1961, № 3, էջ 62, նկ. 4։

39 А. О. Мнацаканян. Находки предметов бронзового века в селении Толорс (Зангезур) Арм. ССР. КСИИМК, вып. 54. I—3, էջ 100, նկ. 10։

40 ОАК за 1899 (Ռեալերի պեղումները Ելիզավետպոլի նահանգում, № 3 գամբարան)

41 Г. М. Асланов. О музыкальных инструментах древнего Азербанджана. СА, 1961, № 2, էջ 238, նկ. 3։

42 J. de Morgan, նշվ. աշխ., էջ 204, նկ. 198, 2։

43 Ըստ Հ. Ա. Մարտիրոսյանի և Ռ. Թորոսյանի բանավոր տեղեկության։

44 Փորձերը կատարվեցին Աբովյանի № 7 տեխ. ուսումնարանի ուսմասվար Է. Բաղդասարյանի և Ավլոգ բանվոր Պ. Ավագյանի ակտիվ օժանդակությամբ և խորհուրդներով, որի համար էլ հայտնում ենք նրանց մեր շնորհակալությունը։

րից հանելուց հետո անմիջապես սուզել են ջրի մեջ և սառեցնելուց հետո ծեծել են հարդարելու և ամրացնելու համար[45]. Սակայն, ինչպես նշվեց վերևում, ոչ այս տեսակը, ոչ էլ նրա պատրաստման տեխնիկան բոլորովին էլ ուշ բրոնզի շրջանի բնորոշ գիծը չէին կազմում։ Ուշ բրոնզի շրջանը բնորոշվում է ավելի շուտ փակ կաղապարի մեջ պատրաստված իրերով, որոնց պարզագույն օրինակներից են I խմբին պատկանող շեղբերի մի մասը։ Փակ կաղապարով է պատրաստվել II դաշույնատեսակը։ Չնայած իր անկատար ձևերին, հենց այս դաշույնատեսակը հանդիսացավ այն նախաօրինակը, որից և ծագեցին դաշույնների IV և VIII տեսակները։ Այս պատճառով մենք ավելի նպատակահարմար ենք գտնում կանգ առնել միայն II դաշույնատեսակի պատրաստման եղանակի վրա։ Ուշադրությամբ դիտելով II դաշույնատեսակը, առաջին հերթին կտեսնենք, որ այն փաստորեն նույն II-ն է, միայն այն տարբերությամբ, որ փայտե դաստակը փոխարինված է մետաղով, որը պահանջում է պատրաստման այլ տեխնիկա։ Նկատելով դաստակի վրա եղած բազմաթիվ եռանկյունաձև անցքերից, կարելի է ենթադրել, որ դրանք սոսկ զարդեր չեն հանդիսացել, այլ նրանց առկայությունը կապված է հենց դաստակի պատրաստման եղանակի հետ։ Իրոք, ուսումնասիրելով պատրաստման երկու ամենահավանական եղանակները, կհամոզվենք, որ անցքերը (ձևը էական չէ) անհրաժեշտ են։

Պատրաստման I եղանակի դեպքում որպես մոդել օգտագործվում է մեղրամոմը։ Պրոցեսը ընթանում է հետևյալ ձևով։ Սկզբից վերցվում է դաստակի ձև ունեցող կավը, որը մակերեսին ունի ուռուցիկություններ (ձևը էական չէ)։ Դրանից հետո այն ծածկվում է մոմի շերտով, որը տվյալ դեպքում չպետք է ծածկի եռանկյունի ուռուցիկությունները։ Այս բոլորից հետո կավամոմից պատրաստված զանգվածը նորից ծածկվում է կավի և ավազի մածուկի բավական հաստ շերտով, որի մեջ թողնվում է անցք՝ մոմի արտահոսքի և մետաղի լիցքի համար։ Այս գործողությունները ավարտելուց հետո կիսապատրաստ կաղապարը թրծվում է, որի ընթացքում մոմը հալվելով դուրս է հոսում, տեղ ազատելով մետաղի համար։ Այսպիսի կաղապարով իրը կարելի է պատրաստել միայն մեկ անգամ։

Պատրաստման II եղանակի դեպքում մոդելը արվում է փայտից, որին տրվում է դաստակի ձև։ Փայտե մոդելը արտատպվում է կավե զանգվածի երկու կիսյակի վրա, որոնք դրանից հետո թրծվում են և մաքրվում։ Թրծված կիսյակների միջև եղած ազատ տարածության մեջ տեղադրվում է դաստակաձև կավի կտորը, որը մակերեսին ունեցած եռանկյունաձև ուռուցիկությունների շնորհիվ ազատ տարածություն է թողնում մետաղի համար։ Նման կաղապարը թույլ է տալիս իրը պատրաստել մի քանի անգամ։ Պատրաստման այլ եղանակ են պահանջում V խմբին պատկանող դաշույնները։ Սրանց մոդելը նույնպես կարող է պատրաստված լինել փայտից կամ մոմից։ Դաստակի մասում փայտին (մոմին) տրվել է ձվաձև տեսք, որից հետո արտատպվել (ծածկվել կավի մածուկով) է կավե կիսյակի մեջ։ Մետաղը լցվելուց և սառչելուց հետո եզրերը ծեծելով կլորացրել են։ III տեսակի դաշույնի մոդելի նյութ կարող էր ծառայել մոմը կամ փայտը։ Սրա դաստակի մասը կտրվածքում կունենար լատինական I տառի ձևը։ Հետագա գործողությունները նույնն են, ինչ և նախորդ դեպքում։ Դաշույնների VI տեսակը պատրաստվել է III-ի եղանակով, այն տարբերությամբ սակայն, որ սրա դաստակի մասում եզրերը ավելի երկար են եղել և ունեցել են կիսաշրջանի տեսք։ Այդ եզրերը ծալվել են արտադրանքի սառչելուց հետո։ Բացի կավե կաղապարներից, օգտագործվել են նաև քարից և մետաղից պատրաստված կաղապարներ, որպիսիք հայտնաբերվել են Բորժոմիից, Ջուգդիդիից (կոլխիդյան տապարներ պատրաստելու համար պղնձե կաղապարներ)[46], Նովոռոսիյսկից[47] (աբխազական տիպի դաշույնի քարե կաղապար) և այլ վայրերից։ Հայաստանում դեռևս չեն հայտնաբերված դաշույնների նման կաղապարներ, բայց հայտնաբերված են սակրերի քարից պատրաստված կաղապարներ (Լենինական, Կարմիր բլուր)։

---

[45] Հասկանալի է, որ ուշ բրոնզի դարաշրջանում «սառը» կռումը պայմանավորված էր ոչ թե վերը հիշատակված պատճառներով, այլ անագի քանակությունից տվյալ իրի մեջ։ Պատրաստման նման եղանակը հանգեցնում է այն կարծիքին, թե, բրոնզի շրջանի մետաղագործները գիտեին բրոնզի կարծրանալու և փափկելու հատկությունը. եթե բրոնզը աստիճանաբար է սառչում՝ կարծրանում է, իսկ եթե շիկացած բրոնզը անմիջապես ջրի մեջ մտցվի, ապա այն պահպանում է իր փափկությունը և թույլ է տալիս իրը ենթարկել հետագա մշակման։

[46] Ф. Тавадзе и Т. Сакварелидзе, Бронзы древней Грузии, Тбилиси, 1959, էջ 55, աղ. XXXII, նկ. 4։

[47] Ernest Chantre, Recherches antropologiques dans le Caucase, Lion, 1885, t. I, աղ. IV, նկ. № 1 և № 2։

Ելնելով շարադրվածից, կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

1. Ուսումնասիրվող դարաշրջանում Հայկական լեռնաշխարհի բոլոր դավառներում անասնապահության և երկրագործության հետագա զարգացման, միջցեղային հաճախակի ընդհարումների հետևանքով լայն չափեր է ընդունում զենքերի արտադրությունը, երևան է գալիս մանավանդ դաշույնների մինչ այդ չտեսնված առատություն. դրանք հիմնականում բաժանվում են ժամանակագրական 3, ձևաբանական՝ 8, ըստ պատրաստման եղանակների՝ 5 խմբի։

2. Հանդես գալով դեռևս III հազարամյակում, դաշույնների I տեսակը իր գոյությունը պահպանում է մինչև ուշ բրոնզի դարաշրջանը, որոշ փոփոխությունների ենթարկվելով և կատարելագործվելով հասնում է II տեսակին, որը հանդես է գալիս սկսած մ. թ. ա. XIII դ.։ Դաշույնների IV տեսակը իր հերթին հանդիսանում է II-ի հետագա զարգացման արգասիք։

3. Հայկական բարձրավանդակում II հազարամյակի կեսերից Առաջավոր Ասիայի ազդեցության տակ երևան է գալիս դաշույնների III տեսակը, որը իր հետագա կատարելագործումն է ստանում տեղական հիմքի վրա, ձեռք բերելով ինքնուրույն գծեր։

4. VII տեսակը, հանդիսանալով նորություն, միաժամանակ սերտ կապված է I, IV, V VI տեսակների հետ։ Այս հանգամանքը մատնանշում է մի կողմից VII-ի տեղական արտադրանք լինելը, մյուս կողմից ցույց տալիս, որ դաշույնների զարգացումը ընթացել է պարզեցման ուղիով։